ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 284

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

(ծածկագիրը՝ 3.1-514 երեխայի խմանքի համար տրամադրվող արձակուրդ՝ մինչև 2022թ. հունվարի 12-ը ներառյալ)

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բնակչության պաշտպանության նախապատրաստման, արտակարգ իրավիճակների սպառնալիքի դեպքում հնարավոր հետևանքների նվազեցման կամ պատերազմական ժամանակաշրջանում քաղաքացիական պաշտպանության գործընթացին.

բ) առաջարկություններ է ներկայացնում Բաժնի պետին՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների վերաբերյալ.

գ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և Երևանի քաղաքային ենթակայության կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանների մշակման աշխատանքներին, ինչպես նաև իրականացնում է բնակչության պաշտպանության նախապատրաստական և հիմնական միջոցառումներին առնչվող այլ աշխատանքներ.

դ) Բաժնի պետին ներկայացնում է հաշվետվություններ՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ու քաղաքացիական պաշտպանությանն ուղղված աշխատանքների ընթացքի մասին.

ե) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի հիմնական ցուցանիշների շտեմարանի (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակի) ստեղծման և ճշգրտման գործընթացին.

զ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի և Երևանի քաղաքային ենթակայության կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծմանն ու նախապատրաստմանը, պատսպարման վայրերի ուսումնասիրությանը.

է) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բնակչության ուսուցմանն ուղղված միջոցառումներին, ներկայացնում է զեկուցագրեր անցկացման ընթացքի վերաբերյալ.

ը) Բաժնի պետի հանձնարարությամբ ապահովում է իրականացվող գործառույթների փաստաթղթային ձևակերպման, համապատասխան իրավական ակտերի մշակման աշխատանքների կատարումը.

թ) իրականացնում է Երևան քաղաքի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

ժ) կատարում է Բաժնի պետի հանձնարարությունները ժամանակին ու պատշաճ որակով.

ժա) ապահովում է Բաժնի փաստաթղթաշրջանառությունը (այդ թվում՝ էլեկտրոնային).

ժբ) հետևում է Բաժնի պետի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է Բաժնի պետին.

ժգ) անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և Բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ժդ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

ժե) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի առաջատար մասնագետն ունի Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) ունի միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.

բ) ունի Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Նյութական պահուստի մասին» օրենքների, զորակոչային և զորահավաքային հարցերին վերաբերող ՀՀ կառավարության որոշումների, Աշխատակազմի և Վարչության կանոնադրությունների ու իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետի անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և այլ ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի հուլիսի 9-ը, ժամը 10:00:
Դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010515133):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: